

Հ. Բ. Ը Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ

ՅԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՇՈՇԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1973—1974 կրթական տարեցանին համար Հ. Բ. Ը. Միութեան համալսարանական կրթաթոշակներու բաշխումի պարմաններն են.

1. Միութեան այժմու 284 համալսարանական սաներէն 78 հոգի այս տարի չը հանաւարտ պիտի ըլլան : Մնացեալ 206 սաներէն 1973—1974ին կրթառոշակ պիտի ստանան անոնք որ յաջողած են տարեվերջի քննութեանց մէջ :

2. Վերոյիշեալներէն դատ կրթաթոշակ պիտի յատկացուի ստանափակ թիւով նոր թեկնածուներու :

3. Կրթաթոշակի այս յատկացութեալներէն կրնան օգտուի : արդէն իսկ պաշտօնի վրայ գտնուող ուսուցիչները, երբ անոնք մասնաւոր կերպով յանձնարարուին իրենց վարժարաններուն տնօրէնութեան կամ հոգարարձութեան կողմէ :

4. Համալսարանական ուսմանց համար թեկնածու ներկայացները պիտք է անպայման երկրորդական վարժարանէ մը վկայուած ըլլան :

5. Նոր թեկնածուներուն մէջ նախապատճենաթիւն պիտի տրուի անոնց, որ դործօն մասնակցութիւն բերած են կամ կը բերեն Հայ կետնքին, և Հայ ժամկոյթին կամ Հայ իրականութեան ստարելու կոչուած ուսմանց պիտի հետեւին :

6. Բոլոր թեկնածուները, ուսուցիչ թէ ուսանող, Լիբանանի, Առուրիոյ և Ֆրանսայի մէջ իրենց գիմումը պիտք է կատարեն մինչեւ Ապրիլ 2, 1973, Միութեան հետեւեալ մարմիններուն —

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

District Committee of Lebanon

P. O. Box 715

Beirut, Lebanon

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

District Committee of Syria

P. O. Box 348

Aleppo, Syria

UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE

Comité Régional de France

11, Square Alboni

Paris (16e), France

7. Այլ վայրերէ թեկնածուներ մինչեւ Ապրիլ 2, 1973, իսկ Հարաւային Ամերիկային եւ Աւստրալիային խնդրաբաններ մինչեւ Նոյեմբեր 1, 1973, պէտք է դիմեն ուղղակի կեղը. Վարչ. Ժողովին, հետեւալ հացեալ—

**ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS
109 East 40th Street
New York, N. Y. 10016, U. S. A.**

8. Դիմումնադիր ներկայացնողները հարցաթերթիկ մը պիտի ստանան այն մարմնէն, որուն դիմած են: Թեկնածուները պէտք է պատասխանեն րուր հարցումներուն եւ հետեւին հարցաթերթիկին մէջ տրուած ուղղութեան:

9. Միութեան Լիբանանի, Սուրբոյ և Ֆրանսայի Շրջանակացին Յանձնաժողովներուն կրթական Յանձնախուժերը այդ վայրերու թեկնածուներուն թղթաձրաբները ուսումնասիրելէ ետք զանոնք մինչեւ Մայիս 14 պիտի փոխանցեն կեղը. Վարչ. Ժողովին, արժանաւորներուն մասին պատճառարանեալ յաձնարարութեամբ:

10. Ներկայիս իրենց ուսումը շարունակող Հ. Բ. Ը. Միութեան ստները ընթացիկ դպրոցական տարեշրջանի վերջաւորութեան, իրենց քննութեանց արդիւնքը եւ կարգափոխութեան ու շրջանաւարտութեան պարագաները պէտք է անպայման մինչեւ Յուլիս 2 հաղորդեն ուղղակի կեղը. Վարչ. Ժողովին:

11. Կրթաթոշակ չի յատկացուիր այն նոր թեկնածուներուն, որոնց վերջին տարուան նիշերուն ընդհանուր միջինը 80 առ հարիւրէն պակաս է:

12. Թեկնածուներուն հայերէնազիտութիւնը եւ ի մասնաւորի հայ վարժարաններէ շրջանաւարտներուն վերջին երեք տարիներու հայերէնի եւ առնչակից նիւթերու նիշերը կարեւորութեամբ նկատի պիտի առնուին:

13. Իրենց համալսարանական ընթացքին առանց մեր դիմութեան եւ հաւանութեան ճիւղ, ոստան կամ համալսարան փոխող սաները կը դադրին կրթաթոշակ ստանալէ:

Այս յայտարարութիւնը միաժամանակ հրատարակութեան կը տրուի Ամերիկայի եւ արտասահմանի հայ թերթերուն մէջ:

Դիմում կեցը. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Փետրուար 5, 1973

Նիւ Եորք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ